

3 Սիրտդ ճմլվում է, երբ նայում ես գերության մեջ գտնվող տղայի մոր աչքերին, ով չգիտի՝ կվերադառնա՝ զավակը, թե՞ ոչ՝ հարցական հայացքը հառելով դեպի Աստված:

Մոր աչքերում ցավ կար, բայց միաժամակ հույս, որ տղան կվերադառնա: Լույսը բացվելուն պես, կոկորդ խեղդող արցունքների միջից խնդրում էր Աստծուն զավակի վերադարձի համար: Ժամանակը կանգ էր առել, սլաքները չեին շարժվում, նրա վերադարձին էին սպասում:

Նոյեմբերի 9-ին, երբ ավարտվում է պատերազմը, նրա ծնողների համար դեռ ավարտված չէր պատերազմը, մոլորության մեջ սպասում էին իրենց տղայի զանգին: Յեռախոսի զանգերը երկար ժամանակ չեին հնչում: Մոր սրտի թթիռը կանգ էր առել, արցունքներն աչքերին չորանում էին, գիշերներն անգամ չեին լուսանում:

Իսկ հայրը... մարդն իրեն զսպում էր, որ կողքից չտեսնեն նրա ցավը, ու լուր, նստում էր մի

անկյունում մտքերի հետ:

Բոլորին հուսադրում էր. «Տղաս կգա, նա ողջ-առողջ տուն կվերադառնա, զգում եմ, նա մոտ է, նա ողջ է»:

Վալերան 57 օր անց էր կացրել գերության մեջ: Նա այնքան ուժեղ էր, որ մեկ վայրկյան անգամ չէր մտածում հայրենիք չվերադառնալու մասին: Ոգու ուժը, համարձակությունը, ոչնչից չվախենալը դարձավ կյանքի նշանաբանը: Երբ Բաքվից զանգահարեց, մայրը զգաց, որ իր տղան հոգով կոտրված չէ: Նա հայրենիք վերադարձավ դեկտեմբերի 14-ին:

Բավական չէ միայն իր ազգի զավակը լինել, պետք է նաև նրա իրաշունչ զինվորը լինել, ասել է Նժենեց: Դուք ազգի իրաշունչ զինվորն ես, որ քաջաբար մարտնչեցիր և կարողացար ոհմակայել բոլոր դժվարություններին: Դուք իմ հերոսն ես, բոլոր ժամանակների իմ հերոսը:

**Քրիստինա ԱՇԱՍՅԱՆ,
Լրագրություն 2-րդ կուրս**

ՆԱ ԾԱՐՈՒՆԱԿՈՒՄ Է ԱՊՐԵՑՆԵԼ ԱՐՑԱԽԸ




Ալբերտ Արմենի Մացականյանը ծնվել է 2001 թվականի ապրիլի 30-ին Ստեփանակերտ քաղաքում: Ալբերտը դեռ մանկուց սիրել է սպորտը և սպորտով զբաղվել սկսել է մանկությունից: Յետագայում արձանագրել է մի շարք հաջողություններ, դարձել է Յայաստանի, Վրաստանի և Եվրոպայի չեմպիոն:

2019թ. գորակովչել է բանակ: Պատերազմի ժամանակ ժամկետային զինծառայող էր և 6 օր համար մարտնչել է թշնամու դեմ Մատահիսում, Թալիշում: Յետո Ալբերտին տեղափոխում են հետախուզական վաշտ, նշանակում հրամանատար: Զոհվում է իրենց գնդի հրամանատարը և պետք էր թշնամու վերահսկողության տակ գտնվող դիմ դուրս բերել: Իր 7 հոգանոց խմբով

ոչնչացնում է թշնամու 180 հոգանոց զորքը, վերցմելով մեր դիրքը՝ իրամանատարի դիմ դուրս բերում: Նրան շնորհում են լեյտենատի կոչում: Այժմ Ալբերտը 20 տարեկան է և սովորում է ԱրՊՅ ֆիզկուլտուրա և սպորտ կրթական ծրագրով: Ալբերտի խոսքով՝ շարունակել մեր զոհված տղաների գործը՝ յուրաքանչյուր ապրողի պարտքն է: Տեսնելով, որ ընկերդ այլևս չկա, ուժի ավելանում է, ավելի ես պարտավորվում շարունակել նրա կիսատ թողածը, իսկ հիմա նաև՝ ապրել...

Արցախն Ալբերտի համար հայրենիք է, սրբություն: Երբ նրան բնութագորում են որպես հերոս, նա սաստում է ասելով. «Ինչ եմ արել որ, հայրենիք եմ պաշտպանել, որը յուրաքանչյուրիս պարտքն է»: Այժմ այդ խիզախն երիտասարդը շարունակում է ապրել Արցախում, զբաղվել սիրած սպորտով և սեփական գործով: Պլանավորում է զարգացնել իր բիզնեսը և յուրովի նպաստել Արցախն ապրեցնելուն:

**Աննա ՂԱՅՐԻՅԱՆ,
Լրագրություն 2-րդ կուրս**



«Քո Ժամանակը»

ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՍՏԱՏԱՐԱՐԱՐԱՅԻ
ԱՆՁԵԼԱ ՇԱԽԱՆՑ,
ԼՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2-ՐԴ ԿՈՒՐՍ

Խմբագիր՝ Զ. ՍԱԼՈՎՅԱՆ
Հանդիպ պատասխանատու՝
Անձելա Շախանց,
Լրագրություն 2-րդ կուրս

Տպաքանակ՝ 400
Տպագովում է Արցախի
պետական համալսարանի
դրաստուակության
տպաքանակը
Մեր հասցեն՝ Ա. Գոշի 5:
Հեռ.՝ (047) 94 04 91



Ուզո՞ւմ ես գուշակել, տեսնել մի ժողովրդի
ապագան՝ նայի՛ նրա երիտասարդությանը:
գարեգին Նժենեց

№ 8
Նոյեմբեր 2021

Քո Ժամանակը

ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՍՏԱՏԱՐԱՐԱՅԻ
ՈՒՍՍԱՌԱԿԱՆ ԱՍՍԱԹԵՐԹ

Հայրենիքն ու նա լծորդված են իրար

«Հայրենիքս և ես՝ մենք լծորդված ենք իրար, ինչպես հոգի և մարմին, ինչպես նպատակ և միջոց: Նա գերազույն նպատակն է, ես՝ միջոցը»:

Նժենեի այս սկզբունքը իրենց հոգում կրողները դարձան նրան արժանի սերունդներ: Վարուժան Առատամյան այդ գաղափարական ու նվիրյալ սերնդից էր:

Ծնվել է 1974թ. սեպտեմբերի 28-ին ճարտարարություն: Ուսում է ստացել ծննդավայրի դպրոցում: Այնուհետև կրթությունը շարունակել է Մարտունու արհեստագործական ուսումնարանում:

Վարուժանը խանուր էր բացել, տարեցտարի ընդլայնել խանութի տարածքը և իր փոքրիկ բիզնեսով էր զբաղվում: Նա իր բիզնեսի ու ծննդավայրի հետ կապված շատ նպատակներ ուներ, որոնց անպայման կիսաներ իր համար ու աշխատասեր բնույթով: Սակայն 44-օրյա պատերազը խախտում է նրա ու շատերի ծրագրերը: Պատերազմի գույժը լսելուն պես Վարուժանը կամավորագրվում է, մեկնում ռազմաճակատ: Նրա աչքերը դեռ պատահ տարիքում էին տեսել ու զգացել պատերազմի ողջ արհավիրքը: Մասնակից լինելով Արցախյան ազատագրական պայքարին, քառօրյա մարտերին՝ քաջ գիտակցում էր՝ ուր և ինչի համար է գնում:

Սարտերը ծանր էին ու անհավասար և զինտեխնիկայի, և մարդկային տեսանկյունից: Բայց դա չի խանգարում հայ մարտիկին՝ կանգնել երկրի պաշտպանության սահմանագծին:

«Երբ նրան հորդորում էին, որ դիրքերից հջողի, չեր լսում, ասում էր, որ չի կարող մենակ թողնել իր ընկերներին, ովքեր տարիքով փոքր էին իրենից», -պատմում են հարազատները:

Յոկտեմբերի 30-ը ճակատագրական դարձավ Վարուժանի համար: Այդ օրը «Գեւորգավան» կոչվող տեղամասում մահացու վիրավորում են ստանում երեք ճարտարարներ, որոնց թվում՝ նաև Կարուժանը: Նա բռնում է հավերժության ժամապարհությանը և հաջարատներին, ուժ տալիս ապրելու, իր կիսատ թողած իդերն ու նպատակներն իրագործելու:

Անձաների գնդի մեջ Վարուժանը շարունակում է իր հավերժի երթը և դուրս է գալիս ամեն աստղալից երկնքի հետ, ամեն պայծառ օրվա արևի շողի հետ, ամեն կապույտ երկնքի մեջ...

**Աննա ՂԱՅՐԻՅԱՆ,
Լրագրություն, 2-րդ կուրս**



Դուրս բերել, քանի որ այդ դիրքն արդեն անցել էր թշնամուն: Նրա մահվանից մի քանի ամիս անց են միայն ծնողները կարողանում դին հոդին հանձնել:

Այսօր նրա ավագ որդին, ժամկետային զինծառայող է և ծառայում է հայոց բանակում՝ սրտում ունենալով իր սկզբունքային կերպարը:

«Լուրջ ու միևնույն ժամանակ կատակասեր մարդ էր: Մինչև այսօր էլ չեմ հավասում, որ չկա, - ասում է իր հարեւանուիկին և շարունակում, - նրա խանութ մտնելուց միանգամից գգում են նրա բացակայությունը: Այնտեղ ամեն ինչ նրան է հիշեցնում»:

Նրան ճանաչողները պատմում են, որ Վարուժանը օրինակելի էր թե՛ որպես որդի, թե՛ որպես ամուսին, հայր, ընկեր, լավ բարեկամ, թե՛ ուղղակի որպես հայրենիքի զավակ:

Յարազատների ու Վարուժանին ճանաչողների համար սիրելի Վարուժից մնացել են թանկ հիշողություններ, որոնք ուղեկցում են նրանց:

Հայրենիքի համար մարտիրոսված մյուս հերոսների նման նա էլ որպես իրեշտակ ապրում է իր ծննդավայրում, հսկում և ուղղորդում է ծնողներին ու հարազատներին, ուժ տալիս ապրելու, իր կիսատ թողած իդերն ու նպատակներն իրագործելու:

Անձաների գնդի մեջ Վարուժանը շարունակում է իր հավերժի երթը և դուրս է գալիս ամեն աստղա

Ա Ն Ա Վ Ա Ր Տ Հ Ե Ք Ի Ա Թ



Եր շատ փոքր էի, մայրս ինձ շատ էր հեքիաթներ պատմում: Ինձ հետաքրքիր էր հեքիաթներում յուրաքանչյուր հերոսի ծակատագիրը: Դուրախություն ինձ և բոլորիս, հեքիաթներում՝ բարին միշտ հաղթում է չարին: Ինձ համար հեքիաթներում ուժեղը և բարին մարմնավորողները հսկական հերոսներ էին:

Իմ կյանքն էլ ինձ համար մի հեքիաթ է, քանզի ունեմ գեղեցիկ ընտանիք և ինձ սիրող ծնողներ: Իմ կյանքի հեքիաթը շարունակվում էր այնքան, քանի դեռ չկար պատերազմ ասվածը: Յենց պատերազմն էլ դարձավ իմ կյանքի չար հերոսը: Իմ կյանքի հեքիաթում կան բարի ու չար հերոսներ: Չար հերոսների մարմնավորողները՝ թշնամիներն են, իսկ բարի հերոսների մարմնավորողները՝ մեր անվախ տղաները:

Սեպտեմբերի 27-ի առավոտյան արթնացա ոչ թե մորս կանչից, այլ արկերի պայթյունից: Կրակահերթերն ու արկերի տարափը անձրկի պես հորդում էին: Խաղաղ բնակչությունը համատարած տեղահանվում էր: Վիրավոր Մարտակերտս կրկին թշնամու թիրախում էր: Պատերազմ էր:

Բար, որից արյունի հոտ էր փշում:

Սենք տեսել ենք ապրիլյան պատերազմ: 2016-ի պատերազմը, վստահաբար կարող եմ ասել, որ այս պատերազմի միայն թրեյլերն էր: Զկան պատերազմներ առանց կորուստների: Մի ամբողջ սերունդ կորցրեց իր արմատները: Մղջավանջը շարունակվում էր, իսկ մենք հայրենիքից հեռու, բայց մարմնի ամեն մի բջիջով հայրենիքի սրտում էինք: Ռժվար է, երբ հոգիդ ու մարմինդ համատեղված չեն: Յոգիս

Անժելա ԾԱՐԱՍՅ, լրագրություն, 2-րդ կուրս

Արցախում էր, իմ Մարտակերտում, իսկ ես ֆիզիկապես, հեռու, շատ հեռու: Երբ իրաժեշտ էի տալիս հայրիկիս, պահանջեցի, որ ամեն օր սպասելու են նրա զանգին, իսկ հայրս էլ իր հերթին խոստացավ, որ ոչ մի օր չեմ դադարի սպասել ու ամեն օր թեկուց մի քանի վայրկյանով լսում էի հորս ոգեշնչող ձայնը: Զայն, որը այդ չափած օրերիս միակ ապրեցնող խորհրդանիշն էր:

Յոգիս ցավում էր, հույսս չէր մեռնում՝ ինչպես մոխրի տակ արդեն հանգչող, բայց դեռ իր գոյության համար պայքարող կրակ:

Սենք հավատում էինք հաղթանակին:

Երբ վերադարձա հայրենիք, սկսեցի վերակենդանանալ, տպավորություն էր, թե 44-օրյա կոմայից հետո կրկին վերադառնում են կյանք: Մարտերում կերտված Մարտակերտս վիրավոր էր, բայց իր հզոր զավակների պես օր օրի կազդուրվում է: Թշնամու համար ախորժավի պատառը այդպես էլ չհասավ երախին: Մարտակերտս կա ու կմնա հար կանգուն:

Կյանքը շարունակվում է իմ ծննդավայրում: Մեր հերոս տղաներին մենք բացակա չենք դնի: Այսօր նրանք մարմնացում են գտել մեր գալիք սերունդների մեջ: Այս ասածիս ապացույցն է Մարտակերտի մանուկների բակային խաղերը, իսկ այն եղել և շարունակում է մնալ «կրակողի» խաղը: Դա ապացույցն է նրա, որ գալիք սերունդը չի համակերպվել ներկայի իրականության հետ: Բայց թող լուն բոլոր գենքերը, թեկուց խաղալիք, թեկուց խսկական:

Բոլոր հեքիաթներում բարին հաղթում է չարին: Բայց իմ հեքիաթում մի բան այն չէ: Իմ հեքիաթում թյուրիմացություն կա: Բոլորը մտածում են, որ այս հեքիաթը արդեն ավարտվել է: Բայց ես այդպես չեմ մտածում, որովհետև իմ հեքիաթի վերջում՝ դեռ բարին չի հաղթել չարին:

Յիմա ինձ համար ոչ մի հեքիաթի հերոս այլևս խսկական հերոս չէ: Այժմ ինձ համար խսկական հերոսները մարմնացում են գտել մեր քաջ ու անվախ տղաների մեջ: Սերոյա խսկական հերոսները մեր զինվորներն են, ովքեր արեցին, որ իմ, քո ու բոլորի հեքիաթը ունենա խոստումնալից վերջաբան:

Ինձ համար իմ կյանքի հեքիաթը դեռ չի ավարտվել, քանի որ իմ հեքիաթում մի բան այն չէ: Ես դեռ սպասում եմ իմ հեքիաթի բարի ավարտին...

ԲԱՎԱԿԱՆ ԶԵ ՄԻԱՅՆ ԻՐ ԱԶԳԻ ԶԱՎԱԿՈՂ ԼԻՆԵԼ, ՊԵՏՔ Է ՍԱԵՎ ՄՐԱ ՀՐԱԾՈՒՄ ԶԻՆՎՈՐԸ ԼԻՆԵԼ

Երանի այն մարդկանց, ովքեր ծննդյան օրվանից մինչ մահ ապրել են՝ չիմանալով, թե ինչ է պատերազմը, ով ամեն մի փոքր պայթյունից չի լարվում, չի մտածում. «Այն ինչ էր, ոունք էր, թե՞ ողղակի պայթյուն»: Բայց մենք հայ ենք, և պատմությունը ցույց է տվել և մինչ օրս ցույց է տալիս, որ հայը պետք է իր ապրելու համար պայքարի, պայքարի կյամքի յուրաքանչյուր ակնբարթի համար: Դայ ազգ մյուս ազգերից տարբերվում է իր հերոսությամբ: Դայ ազգը մայրերը ծնել են հերոս զավակներ:

Ես գտել եմ իմ հերոսին ...

Երանի չտեսնեի, չզգայի նրա աչքերի տխրությունը, ցավը, նրա հոգեվիճակը...

Բայց նա ուժեղ է, տոկում, հաղթանամամ, հաղթահարում է իր առջև դրված ամեն մի դժվարություն: Նա իմ հերոսն է, բոլոր ժամանակների իմ հերոսը՝ վալերա Դայրապետյանը:

Ծնվել է 1997թ. հունիսի 29-ին Ստեփանակերտ քաղաքում: 6 տարեկան հասակում հաճախել է Սախարովի անվան համար 8 միջնակարգ դպրոցը, կրթությունը շարունակել Վ. Զհանգիրյանի անվան համար 11 միջնակարգ դպրոցում, այնուհետև Արցախի պետական համալսարանում: Դաճախել է մի շարք սպորտային պարագաներների՝ դյուդոյի, ՄՄԱ-ի, բասկետբոլի: Մրցումներում գրադերել մրցանակային տեղեր:

2015 թվականին 18 տարեկան հասակում զորակոչվել է բանակ, ծառայել Մարտունիում: 2016 թվականին պետք է զորացրվեր, սակայն, ապրիլի 1-ի լույս 2-ի գիշերը պատերազմ է սկսվում՝ Ապրիլյան քառօրյա պատերազմը:

Վալերան մասնակցում է այդ պատերազմին: Կոչումով եղել է ՀՍՍ նշանառու-օպերատոր, արժանացել «Բանակի զերազանցիկ» և «Լավգագույն մարզիկ» կրծքանշանների:

2020 թվական, սեպտեմբերի 27...

Վաղ առավոտյան Աղրբեջանը Թուրքիայի աջակցությամբ լայնածավալ ռազմական հարձակում սկսեց արցախա-աղրբեջանական սահմանի ողջ երկայնքով: Վալերան պատմում է, որ ընկերներով գնացել էին ծկնորսության, Վերադարձալիս լսեցին ծայներ, մտածեցին, զինվորական պարագաները և անգամ գերեվարվեցին: Վերջին անգամ նա ծնողների հետ հեռախոսակապ էր հաստատել հոկտեմբերի 15-ին: Սոցանցերում մայրը, հակառակորդի տարածած տեսանյութում տեսնելով որդուն, տեղեկացվում է, որ տղան գերեվարվեցին է:



Քիոջը, որ նա իջեցնի համազգեստը: Պատերազմի ընթացքում Վալերան կովել էր Մարտունիում, Զրականում (Զարբայիլ), Վարանդայում (Ֆիզուլի) և Ջադրութում:

44-օրյա պատերազմում, եթե անգամ հայկական բանակը անպարտելի է, անհնար էր հաղերել Աղրբեջանին ու նրան աջակից Թուրքիային: Պատերազմի ընթացքում մարդկային կորուսներն անշափելի էին: Նրա գինակից ընկերները նույնպես կրվեցին, շատերը ընկան մատղաշ ծառերի պես, ծուլվեցին հողին՝ արյունը հողի հետ խառնելով, պահեցին իրենց բաժնի հասած սուրբ հողը: Նրա ամենամուտ ընկերը՝ Սամվելը, նույնպես զոհվեց: Զոհվեց նրա աչքի առջև: Փամփուշը դիպավ սրտին, չոքեց միանգամից ընկերներով փոսի մեջ, ընկերոց անունը շուրթերին, մի քանի անգամ արտաքերելով՝ Վալերա: Վալերան մի քանի օր ինտոն մարտական ընկերների հետ միասին տեղափոխվեց Ջադրութ: Չորս կողմից շրջակամական մեջ էին: Ջադրութի տներից մեկում թաքնվել էին, որպեսզի պլան մշակեին և լուսադիմին առաջ շարժվեին, չիմանալով անգամ, որ Ջադրութ էլ մերը չէ, արդեն հակառակորդի վերահսկողության տակ էր անցել: Ջակառակորդը անդադար կրակում էր տան վրա, հետպատասխան չստանալով, հասկացան, որ փամփուշտներ չեն, մտան տուն և... Միգուցե կարողան դուրս գալ շրջափակումից, սակայն գերեվարվեցին: Վերջին անգամ նա ծնողների հետ հեռախոսակապ էր հաստատել հոկտեմբերի 15-ին: Սոցանցերում մայրը, հակառակորդի տարած տեսանյութում տեսնելով որդուն, տեղեկացվում է, որ տղան գերեվարվեցին է՝ 4